Տպագրված է 4 օրինակ

Հաստատված է՝

«5» Մարտ 01

Խորհրդի նախագահ
Յ. Արմէնեան

Գրանցված է ՀՀ
Արդարադատության
նախարարի

«19» 03 2001թ

թիվ 246 հրամանով

Նախարարի տեղակալ
Ս. Աբրոյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2001թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.«Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամը» (այսուհետ՝ Հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է:

1.2.Հիմնադրամը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին (այսուհետ՝ Օրենսգիրք) համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Օրենսգրքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3.Հիմնադրամը «Հայաստանի ամերիկյան համալսարան» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն համատեղ ձեռնարկության իրավահաջորդն է:

1.4. Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ .«Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ»,

կրճատ՝ «ՀԱՀ հիմնադրամ»:

ռուսերեն լրիվ՝ "Американский университет Армении Фонд",

կրճատ՝ "АУА Фонд":

անգլերեն լրիվ՝ "American University of Armenia Fund",

կրճատ՝ "AUA Fund":

1.5. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.6. Հիմնադրամի գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝

375019, ք. Երևան, Բաղրամյան 40:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Հիմնադրամի գործունեությունը բացառապես ծառայում է հետևյալ նպատակներին՝

Առաջին՝ Հայաստանի և տարածաշրջանի երկրների ուսանողներին ապահովել բարձրագույն կրթության ամերիկյան համակարգի և չափանիշներին համապատասխանող համալսարանական կրթությամբ:

Երկրորդ՝ հնարավորություն ընձեռել հիմնադրամի դասախոսական կազմին, ուսանողներին և հիմնադրամի հետ համագործակցող այլ անձանց ներգրավվել հիմնադրամի կողմից բոլոր բնագավառներում անցկացվող հետազոտություններում:

երրորդ՝ մատուցել հանրօգուտ ծառայություններ, որոնք զերծ են քաղաքական ազդեցությունից:

Ուսուցման, հետազոտությունների և հանրօգուտ ծառայությունների միջոցով հիմնադրամը պատրաստում է շրջանավարտներ, որոնք իրենց ներդրումը կբերեն Հայաստանի սոցիալական, տնտեսական և տեխնիկական զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1. Հիմնադրամը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

3.2. Հիմնադրամն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Այն կարող է հաշվարկային և այլ հաշիվներ բացել բանկերում: Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում է մեծ և փոքր Արարատների ուրվագծերի պատկերի մեջ հայերեն և անգլերեն լեզուներով արտահայտված /ՀԱՀ/ և (AUA) Հայաստանի ամերիկյան համալսարանի հապավումը:

3.3. Հիմնադրամն ունի սեփական առանձնացված գույք, կարող է իր անունից մասնակցել գույքային շրջանառությունում, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.4. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.5. Հիմնադրամն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն պատկանող գույքը՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

3.6. Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հաշվետվություն հրապարակել իր գույքի օգտագործման մասին:

3.7. Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացմանը, որոնց համար Հիմնադրամը ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին:

3.8. Հիմնադրամի գործունեության արդյունքում ստացված շահույթն ուղղվում է Հիմնադրամի նպատակների իրականացմանը:

3.9. Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

3.10. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է ժողովրդավարության, մարդասիրության, կամավորության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

4.1. Հիմնադրամը որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակելի տներ և բնակարաններ, սարքավորումներ,

դրամական միջոցներ՝ դրամով և արտարժույթով, արժեթղթեր և այլ անշարժ կամ շարժական գույք:

4.2. Հիմնադրամի գույքի արժեքն արտացոլվում է Հիմնադրամի ինքնուրույն հաշվեկշռում:

4.3. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներն են՝

4.3.1. իրավաբանական և ֆիզիկական անձանց անհատույց հատկացումները և նվիրաբերությունները,

4.3.2. արժեթղթերից, ինչպես նաև ավանդներից ստացված գումարները,

4.3.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ձևերով ձեռք բերած այլ գույքը:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

5.1. Հիմնադրամի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ): Խորհուրդն ունի 7 (յոթ) անդամ:

5.2. Հիմնադրամը յուրաքանչյուր տարի պարտավոր է անցկացնել հիմնադրամի խորհրդի նիստ՝

ֆինանսական տարվա ավարտից հետո 12 ամսվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել և որոշումները կարող են ընդունվել խորհրդի անդամների հարցման միջոցով:

5.3. Խորհրդի նիստերում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

5.4. Խորհրդի նիստերին նախագահում է հոգաբարձուների խորհրդի ատենապետը, որն ընտրվում է խորհրդի անդամների թվից՝ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.5. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

5.5.1. Հիմնադրամի կանոնադրությունը նոր խմբագրմամբ հաստատելը,

5.5.2. Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունները որոշելը,

5.5.3. Հիմնադրամի տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները հաստատելը,

5.5.4. Իրավաբանական անձինք հիմնադրելը և (կամ) դրանցում մասնակցելը,

5.5.5. Հիմնադրամի մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ հիմնադրելը ու դրանց աշխատանքի տարեկան արդյունքները հաստատելը,

5.5.6. Հիմնադրամի անշարժ գույքի օտարման մասին որոշում ընդունելը,

5.5.7. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշում ընդունելը,

5.5.8. Խորհրդի կազմից դուրս եկած անդամի փոխարեն նոր անդամ ընդունելու մասին որոշում կայացնելը,

5.5.9. Հիմնադրամի նախագահ նշանակելու և ազատելու մասին որոշում ընդունելը:

5.6. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7. Խորհրդի յուրաքանչյուր անդամ ֆինանսական տարվա ավարտից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում իրավունք ունի խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ ներկայացնել առաջարկներ: Առաջարկները ներկայացվում են գրավոր՝ նշելով հեղինակի անուն-ազգանունը և առաջարկի հիմնավորումը:

5.8. Հիմնադրամի նախագահի առաջարկությամբ հիմնադրամի ատենապետը կազմում և խորհրդի բոլոր անդամներին է տրամադրում նիստի օրակարգը և օրակարգին առնչվող փաստաթղթերը (դրանց պատճենները), ինչպես նաև նիստի անցկացման ձևը, տարին, ամիսը, ամսաթիվը:

ՀՈԴՎԱԾ 6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀԸ

6.1. Հիմնադրամի նախագահը վարում է Հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջ:

6.2 Հիմնադրամի նախագահը նշանակում և ազատում է Հիմնադրամի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ղեկավարներին:

6.3. Հիմնադրամի նախագահի լիազորությունները սահմանում է խորհուրդը:

6.4. Հիմնադրամի նախագահը ի պաշտոնե խորհրդի անդամ է:

ՀՈԴՎԱԾ 7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել Օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

8.2. Հիմնադրամը կարող է լուծարվել՝

8.2.1. եթե հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,

8.2.2. եթե հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների անհրաժեշտ փոփոխություններ,

8.2.3. Հիմնադրամի կողմից իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելու դեպքում,

8.2.4. Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

8.3. Հիմնադրամի լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե: